ՇՆՈՐՀԱՎՈՐ **10-**ԱՄՅԱԿԴ, «ՋԵՅՐԱՆ»

Սեպտեմբերի ***21-***ին ***,*** Վիրահայոց թեմի «Ջեյրան» մանկա-պատանեկան պարային համույթի հիմնադրման ***10-***ամյակի հոբելյանական համերգը՝ Թբիլիսիի ***«Art Hall»*** արվեստի սրահում ***,*** իրավամբ դարձավ տոնական իրադարձություն ***,*** որին ներկա էին □□□ Վրաստանում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Հովհաննես Մանուկյանը ***,*** Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը ***,*** Վրաստանի նախագահի խորհրդական ***,*** «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը:

Մեկը մյուսին հաջորդող ազգային ու նաեւ վրացական պարերը, հայրենասիրական ոգով ու մարդասիրությամբ տոգորված երգերը տոնակատարությանը հաղորդեցին ազգային ինքնության ու աշխարհին համերաշխության կոչող գաղափար:

Համերգն ինքնին, «Ջեյրան» պարային համույթի գեղարվեստական ղեկավար, պարուսույց, Վրաստանի «Պատվո» շքանշանակիր Սվետլանա Երիցյանի ստեղծագործական տարեգրության փոքրիկ հատվածի պատմությունն էր, ակնհայտ նվաճումները, այդ շարքում` «Մուշ» մանկական խմբի ստեղծումը, որոնց շնորհիվ էլ նա վաստակել է վիրահայ հանդիսատեսի սերը: Այս անգամ եւս նա ստացավ ամենաբարձր ու բաղձալի պարգեւը` հանդիսատեսի սրտաբուխ ծափերը:

Համերգի ավարտին, շնորհավորելով ներկաներին, միջոցառման կազմակերպիչներին եւ նրա շնորհալի մասնակիցներին, Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանն արժեւորեց հոգեւոր մշակույթի դերը` որպես ազգապահպանության գործոն, եւ կոչեց ազգային հոգեւոր արժեքներով, նման գեղեցիկ նվաճումներով դաստիարակել մարդկությանը օգտակար սերունդներ: Եպիսկոպոսը համույթին նվիրեց թբիլիսցի գեղանկարիչ Թենգիզ Միկոյանցի կտավը:

Միջոցառումը վարեց «Հայարտուն» կենտրոնի համակարգող Լեւոն Չիդիլյանը:

Հանդիսույթը կայացավ Վրաստանում Հայաստանի դեսպանության նախաձեռնությամբ, կազմակերպմամբ Վիրահայոց թեմի «Հայարտուն» կրթա-մշակութային կենտրոնի եւ աջակցությամբ ՀՀ մշակույթի նախարարության:

1 / 1